

**ԲԱՐԻ ԵԿԱԾ ԷՔ «ՋՆՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՂԲԻՐՆԵՐ  
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՎ» ԿԱՑՔԷՋԸ**

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը ուրախութեամբ կը տեղեկացնէ, որ 16 Հոկտեմբեր 2021 թուականին տեղի պիտի ունենայ Ջնտուկ կայքէջին առցանց ներկայացումը:

Ջնտուկը ([zndoog.com](http://zndoog.com)) համացանցային լայնածաւալ շտեմարան մըն է, ուր ընդգրկուած են աշխարհի չորս ծագերուն ստեղծուած մանկավարժական արեւմտահայերէն աղբիւրներ եւ գործիքներ: Կայքէջը կը ներկայացնէ հայերէնի ուսուցման արդիական մեթոտաբանութեամբ պատրաստուած ծրագիրներ:

Համացանցային այս կեդրոնին շնորհիւ՝ մանկավարժներ, ուսուցիչներ եւ ծնողներ, դպրոցներէն ներս կամ դուրս, իրենց տրամադրութեան տակ պիտի ունենան հարուստ առցանց վայր մը: Աւելին՝ Ջնտուկը հասանելի պիտի ըլլայ բոլոր անոնց, որոնք պարզապէս հետաքրքրուած են արեւմտահայերէնով եւ կը ձգտին ծանօթանալ ժամանակակից մանկավարժական մօտեցումներուն:

Ջնտուկը կ'ընդգրկէ համացանցային հայալեզու էջեր, մանկական տեսերիզներ, ձայներիզներ, շարժապատկերներ, շարժանկարներ, տարբեր տարիքներու համար նախատեսուած ծրագիրներ, նաեւ՝ գրական ստեղծագործութիւններ, բառարաններ, խաղեր եւ այլ գանազան նիւթեր: Ջնտուկին մէջ կարելի է գտնել ուսուցիչներու համար պատրաստուած գրաւոր եւ լսատեսողական նոր ուղեցոյցներ, որոնց աջակցութեամբ ուսուցիչները կրնան դիւրութեամբ ըմբռնել ծրագիրներու կիրառութեան հանգրուանները եւ հիմնական մօտեցումները:

Մանկավարժական որոշ սկզբունքներու վրայ հիմնուելով ստեղծուած է Ջնտուկը: Լեզուն իր ամբողջութեամբ ընդգրկուած է իբրեւ ապրող, շնչող, ինքզինք զարգացնող, աշխարհին հետ զուգահեռ յառաջացող միջոց, վայր եւ եղանակ: Կայքէջը կ'որդեգրէ երեխայակեդրոն եւ ուսանողակեդրոն մօտեցում մը: Ջնտուկը միշտ պատրաստ է իր բովանդակութիւնը ընդլայնելու: Հետեւաբար, Ջնտուկին դռները բաց են իր սկզբունքներուն համապատասխանող այլ լեզուական աղբիւրներու:

Զնտուկի առցանց ներկայացման ընթացքին կլոր սեղանը պիտի վարէ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի տնօրէն դոկտ. Ռազմիկ Փանոսեանը: Զրոյցի ընթացքին խօսք պիտի առնեն Բաժանմունքին արեւմտահայերէնի զարգացման պատասխանատուն, դպրոցներու եւ կրթական ծրագիրներու աւագ վարիչ Անի Կարմիրեան (Լիզպոն, Փորթուկալ), գրող ու Ինալֆոյի հայկական գրականութեան դասախօս Քրիստիան Բատիկեան (Փարիզ, Ֆրանսա), Ամերիկայի Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդի վարիչ տնօրէն Մարի Կիւլիմեան (Նիւ Եորք, ԱՄՆ), Հայ Կապոյտ Խաչի Զաւարեան Ազգային վարժարանի տնօրէն Հայկանուշ Մինասեան (Աթէնք, Յունաստան), Սուրբ Մեսրոպ-Արապեան վարժարանի հայերէնի ուսուցիչ եւ համադրող Նորա Սարաֆեան Թաշեան (Ալֆորվիլ, Ֆրանսա) եւ ՀԲԸՄ Ալեք Մանուկեան վարժարանի հայերէնի ուսուցիչ Նանոր Սարգիս (Մոնթրէալ, Քանատա):

Ներկայացումը տեղի պիտի ունենայ Լիզպոնի ժամով 20:00-ին: Կարելի է միանալ հետեւեալ յղումով՝

[«ԶՆՏՈՒԿ մանկավարժական աղբիւրներ արեւմտահայերէնով» կայքէջի ներկայացում](#)

<https://us02web.zoom.us/j/87386495798>

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի մանկավարժական եւ ուսուցողական բազմապիսի նախաձեռնութիւններուն նորագոյնն է Զնտուկը: Իր ծաւալուն եւ շարունակ ընդլայնող պարունակութեամբ, կայքէջը խթան պիտի հանդիսանայ արեւմտահայերէնի ուսուցման, զարգացման եւ ամրապնդման: